

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2016 թ. սեպտեմբերի 23-ին կայացած թիվ 1 նիստի

Օրակարգում՝

- Տեղեկատվություն 2016-2017 ուս. տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության վերաբերյալ
- Տեղեկատվություն ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման նոր կարգի մասին
- Տեղեկատվություն մագիստրոսական նոր կրթական ծրագրերի լրամշակման վերաբերյալ
- Անվանական կրթաթոշակների շնորհման հարցը
- ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի հայտարարած «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2016» և «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր–2016» մրցույթներին մասնակցելու համար հայտ ներկայացրած նախագծերի երաշխավորության հարցը:

- **Տեղեկատվություն 2016-2017 ուս. տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության վերաբերյալ**

ԼՍԵՑԻՆ՝ դեկան Է.Ս.Գևորգյանի հաղորդումը 2016-2017 ուս. տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության վերաբերյալ: Նա նշեց, որ 2016-2017 ուս. տարում կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքները հետևյալն են.

Բակալավրիատ՝

Կենսաբանություն մասնագիտություն՝ 53 ուսանող, այդ թվում՝ 9 անվճար

Կենսաքիմիա մասնագիտություն՝ 36 ուսանող, այդ թվում՝ 6 անվճար

Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա մասնագիտություն՝ 30 ուսանող, այդ թվում՝ 7 անվճար

Մագիստրատուրա՝

Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա՝ 12 ուսանող, ուսանող, այդ թվում՝ 5 անվճար

Կենսաինֆորմատիկա՝ 8 ուսանող, այդ թվում՝ 5 անվճար

Մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա՝ 8 ուսանող, այդ թվում՝ 3 անվճար

Գենետիկա և բջջաբանություն՝ 7 ուսանող, այդ թվում՝ 1 անվճար

Կենսաբազմազանության ուսումնասիրում և պահպանություն (բույսեր, սնկեր)՝ 6 ուսանող, այդ թվում՝ 2 անվճար

Կենսաբազմազանության ուսումնասիրում և պահպանություն (կենդանիներ)՝ 5 ուսանող, այդ թվում՝ 1 անվճար

- **Տեղեկատվություն ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման նոր կարգի մասին**

ԼՍԵՑԻՆ՝ դեկան Է.Ս.Գևորգյանին: Նա հիշեցրեց, որ ԵՊՀ-ում 2017-2018 թ.-ից գործելու է ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման նոր կարգ, որի մասին ԵՊՀ աշխատողները կարող են մանրամասն ծանոթանալ <http://documentation.ysu.am> կայքից :

- **Տեղեկատվություն մագիստրոսական նոր կրթական ծրագրերի լրամշակման վերաբերյալ**

ԼՍԵՑԻՆ՝ նոր մագիստրոսական ծրագրերի մշակման հայտերի հարցը :

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հայտերի գնահատման և ծրագրերի հետագա մշակումն արտոնելու համար ԵՊՀ Որակի ապահովման կենտրոն ներկայացնել հետևյալ մագիստրոսական ծրագրերը.

1. Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա
2. Կենսաֆիզիկա
3. Կենսաինֆորմատիկա
4. Ընդհանուր և մոլեկուլային գենետիկա
5. Մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա
6. Կենդանաբանություն և մակաբուծաբանություն
7. Բժշկական սնկաբանություն և կիրառական բուսաբանություն
8. Էկոլոգիա և կենսառեսուրսների կառավարում
9. Հիմնարար և կիրառական ֆիզիոլոգիա

- **Անվանական կրթաթոշակների շնորհման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ Լևոն Օրբելու և Նորայր Միսակյանի անվան անվանական կրթաթոշակներիի շնորհման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով բարձր առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին՝ Նորայր Միսակյանի անվան կրթաթոշակը հատկացնել կենսաբանության մասնագիտության երրորդ կուրսի ուսանող Սահակ Աշոտի Եղիազարյանին, իսկ Լևոն Օրբելու անվան կրթաթոշակը հատկացնել կենսաբանության մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Վիկտորիա Սերգեյի Չատրյանին

- **ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի հայտարարած «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2016» և « Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր–2016 » մրցույթներին մասնակցելու համար հայտ ներկայացրած նախագծերի երաշխավորության հարցը:**

ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի հայտարարած «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2016» և «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր–2016» մրցույթներին մասնակցելու համար հայտ ներկայացրած նախագծերի երաշխավորության հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2016» ծրագրին մասնակցելու համար երաշխավորել հեկյալ հայտերը.

1. Մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի կրտսեր գիտաշխատող Նիկոլայ Վլադիմիրի Ավթանդիլյան՝ «Արգինազ և ազոտի օքսիդի սինթազ. հին ֆերմենտներ՝ կրծքագեղձի հակաքաղցկեղային թերապիայի նոր հեռանկարներով»

2. «Կենսաբանության» գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող՝ կ.գ.թ. Կարեն Արմենի Թոչունյանի առաջարկած «Մանրէների կողմից ջրածնի արտադրության կենսագործընթացի օպտիմիզացումը և դրա կենսատեխնոլոգիայի բարելավումը»

3. Կենսաֆիզիկայի ամբիոնի ավագ լաբորանտ, կ.գ.թ. Մարիամ Աշոտի Շահինյան՝ «Միլիմետրային տիրույթի էլեկտրամագնիսական ալիքների ազդեցությունը ալբումինի և ալբումին-լիզանոլ կոմպլեքսների սպեկտրալ և թերմոդինամիկ պարամետրերի վրա»

4. Կենդանաբանության ամբիոնի ասիստենտ՝ Աստղիկ Սամվելի Ղազարյան՝ «Տվյալների բացակայություն» կարգավիճակ ունեցող Արաքսյան գիշերաչղջիկի (*Myotis shawi*) ուսումնասիրությունը»

«Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր–2016» ծրագրին մասնակցելու համար երաշխավորել հեկյալ հայտերը.

1. Մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասպիրանտ Անի Ռոբերտի Սաղաթելյան՝ «Քարվաճառի երկրաջերմային աղբյուրից մեկուսացված

Thermus scotoductus-ի կարոտինոիդների կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը»

2. Կենսաֆիզիկայի ամբիոնի ասպիրանտ՝ Անուշ Լևոնի Ասատրյան՝ «Ցիսպլատինի և ինիպարիբի համատեղ ազդեցությունը պոլի(ԱԿՖռիբոզ)պոլիմերազ 1 ֆերմենտի ակտիվության վրա առնետների լյարդի բջջակորիզներում»

3. Բուսաբանության և սնկաբանության ամբիոնի ասպիրանտ Անուշ Ստեփանի Ստեփանյան՝ «Հայաստանի միկոռիզային սնկերի որոշ տեսակների ուսումնասիրումը անտառվերականգնման աշխատանքներում կիրառելու նպատակով»

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ.



Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ



Ա.Ֆ.Կարապետյան